ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 290-Ա

28-ը հունիսի 2012թ.

ԼԵՆԱ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու 22.06.20121թ. թիվ 34 որոշումը և հաշվի առնելով Լ.Ղարիբյանի խնդրանքը /դիմում թիվ Ղ-479, 18.04.2012թ./.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արտաշատ քաղաքի Արտաշատ Օգոստոսի 23 փողոցի թիվ 21 գ հասցեի շինության հարևանությամբ գտնվող 16 քմ մակերեսով հասարակական նշանակության հողաարածքը ողղակի վաճառքի կարգով գործունեությունն ընդլայնելու նպատակով օտարելու Լենա Ղարիբյանին , որի կադաստրային արժեքը կազմում է 72384 ՀՀ դրամ:
2. Նշված հողատարածքը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում:
3. Օգոստոսի 23 փողոցի թիվ 21 գ հասցեում գտնվող շենքի նոր հասցեն համարել ք.Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց թիվ 21/3
4. Հանձնարարել ՃՔՀ բաժնի գլխ.մասնագետ Ռ.Ավետիսյանին կատարելու համապատասխան փոփոխություններ հողային հաշվեկշռում:

ԳԱԳԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ 291-Ա

28-ը հունիսի 2012թ.

„ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ„ ՓԲԸ-Ի „ԱՐԱՐԱՏ„ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով գովազդի մասին 30.04.1996թ. օրենքի 11-րդ հոդվածը և ընդառաջելով „ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ„ ՓԲԸ-Ի „Արարատ„ մասնաճյուղի 25.06.2012թ. թիվ 389 գրությանը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել «ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի „Արարատ„ մասնաճյուղին Արտաշատ քաղաքի Շահումյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող շենքի ճակատային մասում տեղադրելու 5,0 քմ մակերեսով գովազդային վահանակ :
2. «ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի „Արարատ„ մասնաճյուղը պարտավոր է վճարելու ամսական 5000 դրամ Արտաշատի քաղաքապետարանի 900415151381 հաշվի համարին:
3. «ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի „Արարատ„ մասնաճյուղի տնօրինությունը պարտավոր է՝

ա/ տեղադրվող գովազդային վահանակի չափերը և հատակագիծը համաձայնեցնել ՃՔՀ բաժնի պետի հետ:

Կատարման պատասխանատու՝ ՃՔՀ բաժնի պետ պրն. Կ.Պողոսյան:

բ/ Սահմանված ժամկետում կատարել օրենքով սահմանված կարգով տեղական վճարները:

Կատարման պատասխանատու՝ քաղաքապետի տեղակալ պրն. Ա.Շիրինյան:

4.Նշված պայմանները չկատարելու դեպքում սույն որոշումը համարել անվավեր:

ԳԱԳԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ